

վճիռը Մուսայի վերաբերմամբ Այդ երկրորդ վճիռը անախորժ տպաւորութիւն թողեց պաշտպանի վրա և, որպէս պատմում են, դատարանների ու վերջինիս մէջ սուր ընդհարում է տեղի ունեցել, և բանը հասել է տեղական ոստիկանական իշխանութեան միջամտութեան: Բանը նրանումն է որ, ինչպէս ասում են, ամբողջ Պարսկաստանը ոտքի կանգնած՝ պաշտպանում էր Մուսային:

Պաշտպանը ներկայացրեց դատարանին դոկումենտներ՝ ստացված պարսկական զանազան պատմական և բարձրաստիճան անձնաւորութիւնների նոյն իսկ թաղաքապետների կողմից, որոնք բոլորն էլ միաբերան հաստատում էին, որ իբր թէ Արքանիս գիւղում տեղի ունեցած կողոպուտի ժամանակ Մուսան, իբրև ուխտաւոր, գտնվում էր ժամանակակից սուրբ տեղերում: Ամենքը սպասում էին, որ դատարանը կարդարացնի Մուսային, բայց հակառակը դուրս եկան: Այդուհանդերձ պաշտպանը նորից սիրտ է տալիս Մուսային, որ նա զեռ կորած չէ...

Մինչդեռ ամեն տեղ սկսել են քաղաքային ինքնավարութեան լիազօրեան, նոյն իսկ աւազների և ուրիշ պաշտօնեաների ընտրութիւնները, մեղմանում դեռ ոչ չարժուած կայ և ոչ նախապատրաստական ժողովներ են լինում խորհրդակցելու և լուրջ կերպով վերաբերվելու ապագայ ընտրութիւններին: Բայց դրա փութարէն մի բանի մարդիկ անցործ չեն և մտի մտկիւններում իրանց համար ձայներ են աշխատում՝ քաղաքային պաշտօններ ձեռք բերելու համար: Այդ չի արգելի, ի հարկէ, հասարակութեան լուրջ դասակարգին, որի համար ընդհանուր շահը բարձր է մասնաւորից, ընտրել քաղաքիս աւագի պաշտօնի համար անպիտի մի մարդ, որը նոյնպէս ընդունել և կրկնել՝ «ընդհանուր շահը բարձր է մասնաւորից» և այդ դէպքում զորքէր քաղաքի նախարարութեան համար... Հայ և թուրք ազգաբնակչութեան միջև օրս ցոյց տուած համերաշխութիւնը, իրաւունք է տալիս մեզ կարծելու, որ ուրիշ քաղաքների թուրքերի վարմունքը արձագանք չի գտնի մեր թուրքերի սրտում և չի կրկնվի մեր ընտրութիւնների ժամանակ...

Կ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 25-ին

Կարդալով «Մշակի» 45 համարում Ս. Ն. ստորագրութեամբ տպված համակրելի յօդուածը, կատարելապէս համաձայն եմք նրա յայտնած գովելի մտքերի հետ, բացի այն կէտից, թէ արհեստագործների գլխաւորը պէտք է լինի ապահովված մարդ. դէմ չեմք, որ նրա թուած բոլոր լաւ յատկութիւնները ունենալուց յետոյ, լինի և ապահովված: Թող մեր ընտրելին լինի ազնիւ, եւսանդուն և վարչական ընդունակութիւն ունեցող անձնաւորութիւն. նա ստանում է ամսական

էր կազմել առանձնաշնորհեալ հայկական նահանգ: Մի և նոյն ժամանակ՝ հայոց պատրիարքանը հաշուած էր երկրի նստողական և ոչ թէ թափառական ցեղերին, որոնք իրանց աստանդական կենսակերպի պատճառով ոչ մի վիճակի չէին համար հաստատուն ընտելի չէին կարող համարվել. մասնատականների համեմատական հաշիւից դուրս էին նաև այն քրդական ցեղերը, որոնք ոչ մի որոշ դատարանութիւն չունէին և իսլամութեան յարած չէին կատարելապէս: Բացի դրանից, թէ կիսինքն թէ գեներալ Չէլիօնի, որը հետում է առաջինին, հայ ազգաբնակչութեան թուահամարի մէջ չեն դնում յոռւ աղաւաւան հայ երէն, նրանց բոլորովին յայն համարելով: Պէտք է դիտենալ, որ այն յոյն երբ, որոնք բնակվում են Ալիի և Ֆէլվէի շրջակայքում, բուն կերպով հաւատալիս են եղած Բիւզանդեան կայսրների ժամանակ և մինչև հիմա էլ կրում են հայ-հոռւ անունը, հոռւ բառը՝ յոռւ աղաւաւանի մոքով դործածելով: Սրանք յունարէն կամ բուլղարէն չը դիտեն և կամ շատ քիչ, և խօսում են չը հայերէն: Բայց հայերէն և թուրքերէն, և վերջապէս իրանք՝ թուրքաց կառավարութիւնն և զօրքը՝ անցեալ տարվայ վերջը նոյնպէս զանազանութիւն չը դրին նրանց և հայերի մէջ, երբ վերջին կտորածների ժամանակ նրանցից էլ քիչ մարդ չը ջարդեցին. ջարդելու ժամանակ խորութիւն չեն անում... Մի եւրօպացի հեղի-

100 բուլղի ուժիկ, որ թէև շատ չէ, սակայն կարող է միջակ վարձատրութիւն համարվել: Արդեօք նպատակայարմար չէր լինի, եթէ որ մենք էլ հետեւէինք Ֆրանսիայում և Շվեյցարիայում ընդունված հասարակական ընտրութիւնների ձևին, ուր թեկնածուները կեղծ համետութիւնը մի կողմ դրած, բացարձակ յայտնում են իրանց ծրարագրերը, թէ նրանցից ով ինչպէս կը տանի զորքը կոչված պաշտօնում, եթէ որ ինքը լինի այն պաշտօնի գլուխը. ըստ որում նա, որ ինքն իրան կարող է զգուհ հանդէս դուրս գալ այս կամ այն պաշտօնում իբրև զործող, անուշտ պիտի ունենայ այն մասին իր հայեացքները և փոքրի շատե ուսումնասիրած և մշակած լինի հարցը, որպէս զի կարող լինի իր ինքնաբերական զանազան խնայելի վիճակը լաւ դրութեան մէջ դնելու: Որովհետև արհեստագործների միջից համարեալ չունենք գրողներ, իսկ ընտրութիւնը արդէն շատ մօտ է, ուստի կարծում ենք որ զգալի օգուտ տուած կը լինէին, եթէ որ տեղական ուսու, հայ և վրացի լրագրողները չը զլանային այս հանրօգուտ հարցի մասին յայտնելով իրանց կարծիքը՝ աջակցէին մեր արհեստագործների գլխաւոր ընտրութեան գործը աւելի աջող և զիտակցօրէն տանելու, որով գուցէ հարաւորութիւն ունենայինք անձնազանդութեան, որը թէև յայտարարել էր սկիզբը ժամը 8 1/2-ին, բայց վարագոյրը բարձրացաւ միայն ժամը 9 1/4-ին:

Արհեստագործ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, ապրիլի 18-ին

Խնդրում ենք այս երկրորդ գրութեան տեղ չնորոգել «Մշակի» էջերում: Երևանի հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է իր չնորհակալութիւնը Երևան քաղաքի բնակիչ Խանաթ Տէր-Խանահեանցին, որը նուրբել է ի յիշատակ իր հանգուցեալ հօր՝ Աստուածատուր քահանայ Տէր-Խանահեանցի՝ մի հարիւր բուլղի, յօգուտ թեմական դպրանոցի:

Անդամ հոգաբարձութեան՝ Գ. Անտոնեան
Քարտուղար՝ Ա. Արշակունի

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 27-ին, շաբաթ օր, թագաժառանգ Յէսարեմիչի Մեծ Խլխան Գեորգի Ալէքսանդրովիչի ծննդեան օրը՝ քաղաքը վաղ առաւօտից զարթոյրված էր զբօսայինքով: Միտի տաճարում, ուղղափառ ամբողջ հոգեւորականութեան ներկայութեամբ, գահադրոյական մաղթանք կատարվեց: Մաղթանքին ներկայ էին Կովկասի կառավարչապետի օգնական կոմս Տատրաշեվ, գեներալներ, զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների ներկայացուցիչները և բաղմամբի աղօթողներ: Մաղթանքներ կատարվեցին և քաղաքի բու-

նակ (V-te de la Jonquiere, Histoire de l'Empire Ottoman) այս հայ-հոռւներին ուղղակի հայոց կարգն է դասում՝ կաթօլիկ և բողոքականների շարքում:

Պ. Չէլիօնի առաջ բերած ցուցակի մէջ կան նաև ուրիշ անձնութիւններ, որիցսակի համար, Չէլիօնի մէջ հայտնւած է 7700 մասնատական, 12:300 յոյն և այլ քրիստոնեայ և միայն 4000 հայ, այն ինչ վերջին բոլոր տեղեկութիւնները՝ միմեանցից անկախ աղբիւրներից անուկած, ապացուցանում են, որ Չէլիօնի գաւառում հայերը ոչ թէ միայն թուրքերից քիչ չեն, այլ շատ աւելի, նոյն իսկ այնտեղ ապաստանող միւս գաւառացիների ցրվուց յետոյ: Այս իրողութիւնը նոյն իսկ ստվծանի կառավարութեան համար էլ կատկածի տակ չէ, որովհետև հայ երի թւի առաւելութեան հիման վրա էր, որ նա պարտաւորութիւն յանձն առաւ նահանգապետ նշանակել քրիստոնեաներից:

Պ. Չէլիօնի հիմնվելով կիսի վրա, տարբեր և տարբեր հայեանքով միշտ այն եղբակացութիւնն է ուղղում դուրս բերել, որ միայն վանքի անջակի 7 կազաններում և Մուշի սանջակի 2 կազաններում, այսինքն ընդամենը միայն 500 աշխի. միւս տարածութեան վրա, հայերը բացարձակ մեծամասնութիւն, այն է 65% են կազմում, մինչդեռ Փոքր-Ասիայի միւս բոլոր գաւառներում մասնաբաժանները՝ 3 մինչև 5 անգամ աւելի են քան հայերը: Կարող ենք միսկմարվել

լոր դպրոցներում, հայոց վանքի մայր-եկեղեցւում և ոչ քրիստոնեայ դատարանութիւններին պատկանողների աղօթարաններում: Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր:

Շաբաթ օր, ապրիլի 27-ին, Բուխարայի էմիր Միր-Ալի-Միր-Աբդուլ-Ահադ-խան թիֆլիսից ճանապարհ ընկաւ դէպի Մոսկվա: Բուխարայի էմիրը իր հետ տանում է բուխարական ոսկէ և արծաթէ բաղմամբի աստղեր և ուրիշ ընծաներ:

Կիրակի, ապրիլի 28-ին, վրաց կառավարական բանկի թատրոնում դերասան Օսանեան, իր երկրորդ դերակրի համար ներկայացրեց Պոստալէ-կոյի «Օտարներ» կոմէդիան, մասնակցութեամբ վրոյրի և հայ դերասանական խմբի մի քանի անդամներ: Ներկայացումը ընդհանրապէս շատ անաշուղ էր: Գեղեցիկագույն միջին անգամ հարկաւոր չէր համարել իր դերը սերտել: Գերակատարներից միայն վրոյր, տ. Մէլիքեան և մասամբ էլ Մամիկոնեան լաւ խաղացին և բարեկարգութեամբ էին վերաբերվել իրանց դերերին: Քիչ չէր մնասում պիկեսայի կատարման և թարգմանութեան լեզուն: Ներկայացումը վերջացաւ շատ ուշ, ժամը 1-ին, չնորհիւ դերասանական խմբի անձնազանդութեան, որը թէև յայտարարել էր սկիզբը ժամը 8 1/2-ին, բայց վարագոյրը բարձրացաւ միայն ժամը 9 1/4-ին:

Կիրակի, ամիս 28-ին, վէրսիպեդիստ-սիրողների ցիկլոդրոմի վրա տեղի ունեցան զարնա-նային առաջին արշաւները, որ բաւական բաղմունքին էին գրաւել: Արշաւները բաղկացած էին մի քանի տեսակ վարժութիւններից: Առաջին արշաւակը՝ մի արծաթէ բաժակակալ՝ ստացաւ վ. Զալինեան՝ 3 վերստ տարածութիւնը 5 րոպէ 50 վայրկեանում անցնելու համար: Նոյն տարածութիւնը 5 րոպէ 56 վայրկեանում անցաւ Ա. Թուրանեանց, որ նոյնպէս մի արծաթէ բաժակ ստացաւ: Արծաթէ զանազան ընծաներ և ժեռանքներ ստացան նոյնպէս՝ պ. Զաւեն-վիչ, վ. Կոսեղ, Միրզոյեան և Նրմաօֆ: Արշաւի ամենահաջողութեամբ մասը թիֆլիսի 96 թւի բէկօրն էր, որ կատարեց պ. Պոստալէկը. նա կէս ժամում վէրսիպեդով անցաւ 14 վերստ 347 սա-մէն տարածութիւն:

Մեզ հայրդրում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին նիստում որոշել է բանալ առաջիկայ ուսումնարանական տարուց 7-րդ մասնագիտական դասարան:

Թիֆլիսից մի խումբ մասնադէսներ այս օրերս ուղևորվեցին Բաթումի նահանգի թէյի անկա-րանները, որոնք գտնվում են երկաթուղու Զակ-վա կայարանի մօտ: Թէյի մշակութիւնը այժմ մեծ տարածութիւն է բռնում և նորից հողեր են պատրաստվում թէյի համար: Գտրծին ծանօթ

պ. կիսէին և իր հետևողներին, որ այժմ, վերոյիշեալ 9 կազաններում էլ հաւանականաբար հայերն այլ ևս մեծամասնութիւն չեն կազմում, որովհետև ճիշդ այդ տեղերի հայերն էին, որ ամենամեծ ջարդը կրեցին (Սասուն և Մուշի դաշտ): Ուստի և թէ ոչ մի չէ հիմա, զոնէ այժմ հաստատապէս կարող են վերոյիշեալ վի-ճակադիրները աներկիւղ այդել թէ հայերը էլ ոչ մի տեղ առաւելութիւն չունեն թուրքերի վրա, քրդի սուրբ, Մուսկէրի հրացանը, տիրող սովը և վերջապէս պանդիտութիւնը կատարեցին այն, որ այնքան ցանկալի էր որոշ չըջանի քաղաքագէտների համար...

Մենք չենք տարակուսում, որ վերջին 30 տարվայ մէջ Փոքր-Ասիայում, նոյն իսկ այն 5 վիլայէթում, որոնց մասին վերջերս այնքան խօսեց, մասնատականների թիւը հետզհետէ աճած և գերազանցած է, քանի որ պատմական մի շարք դէպքեր շատ պարզ կերպով բացատրում են մեզ դրա պատճառը և աղբիւրը: Գաղտնիք չէ, որ երբ Կովկասեան պատերազմից յետոյ ուսաց կառավարութիւնը կատարեալ թոյլաւորութիւն և միանգամայն դիւրու-տակաւ քաղվեցին թիւքերի, ուր բնակվեցան սրանք՝ Ամենամեծ մասը հայաբնակ նահանգ-ներում: Վերջին պատերազմից յետոյ էլ անհայն թիւով մասնատական դաղթականներ թէ կով-

անձինք ասում են, որ այդ բոլոր մեծ աշուղ-թիւն կունենայ Կովկասում, և Զակվայի շրջակայքը շտապում են անուանել Կովկասեան Զինաստան:

Գինու վրա ակցիզ սահմանելու յանձնաժողովը յայտնել է այն կարծիքը, որ գինու և զարեջրի վրա պէտք է ակցիզ դնել՝ հաշուելով 1/4 կոպէ-կից մինչև 15 կոպէկ իւրաքանչիւր շիշից:

Լրագրիներում լուրեր էին տպված, որ Նիժնի-Նովոգորոդում հիւրանոցները սաստիկ թան-կացրել են սենեակների գները, օրական մինչև 10—20 բուլղի: Այժմ ցուցահանդէսի գլխաւոր կառավարիչ Տիմիրեազով պաշտօնապէս յայտնում է, որ Նիժնի-Նովոգորոդում, կառավարութեան նախօրօք հոգածութեամբ, պատրաստ-ված է տան հիւրանոց 3,000 սենեակով, որոնց օրական վարձը նշանակված է 2 մինչև 7 բուլղի, նայած մեծութեան և յարմարութիւններին: Բացի այդ, մինչև 300 տանտէրեր պայմանաւորվել են տալ էժան գներով բնակարաններ, որոնց սենեակների ընդհանուր թիւն է 1200: Ցուցա-հանդէսի վարչութիւնը նոյնպէս ուշք է դարձրել ուտելիքների գնի վրա և պայմանաւորվել է, որ յայտնի սահմաններից նա չը բարձրանայ:

Բիճիճիճի մեզ դրում են, որ կաթողիկոսա-կան տեղակալ Երեմիա արքեպիսկոպոսը ապրի-լի 17-ին հասել է այնտեղ, և մի քանի օր մնալով, ապրիլի 22-ին, մեկնել է Պետերբուրգ կիէվի վրայով:

ԱԽԱԼԻՍԱԲԻՑ մեզ գրում են, Վարձ ժամա-նակում մեր փոքրիկ քաղաքում երկու անգամ հրդէս պատահեց: Առաջին հրդէսին դոհ գնաց թիֆլիսաբնակ Դանիալեանի վարձով տուած տան մի մասը, իսկ երկրորդ հրդէսը ճարակից չուկայի մօտ գտնվող մի խեղճ պրի կնոջ տը-նակը: Քաղաքը գուրկ է հրդէսի ժամանակ օգ-նութեան համար նոյն իսկ ամենատարրական միջոցներից, չունի ամենահասարակ գործիքներ անգամ. մեքենաների կամ հրդէսաչինների խըմ-բի մասին խօսք էլ չէ կարող լինել: Տեղական գործը բնակվում է քաղաքից դուրս գտնվող բեր-դում և չէ կարողանում հարկաւոր օգնութիւնը հասցնել. ամբողջ էլ իր հարպ-հրոցով անդրջը-հեղեղեան միջոցներով աւելի է աւելում, քան ինքը հրդէսը: Բարեբաղդաբար քամի չը կար, թէ չէ՝ վերջին հրդէսը սպանում էր անցնել ալը-ված տանը կից գտնվող աչքի ընկնող մագաղին-ներին և ճարակել չուկայի մի շարք խանութնե-րը: Յոյս կայ, որ քաղաքային ապագայ ինքնա-վարութիւնը շուտ կը հոգայ հրդէսի դէմ կուե-լու միջոցների մասին և ձեռք կը բերէ հարկա-ւոր պարագաները:

Կապից և թէ Բուխարայից, Մակեդոնիայից և Բուլղարիայի այլ կողմերից սղողեցին դարձեալ այդ մի և նոյն հայաբնակ վիլայէթները. միայն Բաթումի և Կարսի նահանգներից հարիւր հա-զար թուրք գնացին այնտեղ, և դեռ շարու-նակում են գնալ, ոմանք յայտնի, ոմանք ծա-ծուկ:

Գեներալ Չէլիօնի իր վերոյիշեալ գրուածքի մէջ, ինքն էլ կատարելապէս վտանակել չը գտ-նելով կիսի տուած վիճակագրութիւնը, յայտ-նում է, թէ ինքը սկսած է այս մասին մի նոր աշխատութիւն, որի մէջ նա պիտի ջանայ երե-ւան հանել Փոքր-Ասիայում հայերի և մասնատա-կանների բաղմունքները և համեմատական թւի մասին մինչև այժմ գտնված աղբիւրների բնի ա-ղատական արժէքը... Այսպէսով այդ նոր ընդադատական աշխատութեան, մենք խոստո-վանում ենք, որ չը նայելով իր ընդունած աղ-բիւրի, այսինքն կիսի, կամ որ մի և նոյն է՝ թիւքաց պաշտօնական հրատարակութեան ան-ճշգրտեան, պ. յօդուածագիրը լուրջ ուսումնա-սիրութիւն է նուրբել այս խնդրին, որի ար-դիւնքն է մասնաւոր իր կազմած գեղեցիկ աղ-գագրական քարտէջը: Փոքր-Ասիայի հայա-բնակ 9 վիլայէթների, որի վրա, ինչպէս վերև յիշեցինք, գոյնների տարբերութեամբ ցոյց են տրված ամեն մի վիլայէթում, սանջակում և կաղաքում բնակիչների ազգայնութիւնը և թիւը: Ականատես

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձէյթունի մասնատակման գայմագամ նշանակելու առիթով, լրագիրները հաղորդում են, որ Բ. Գուռը մինչև այսօր դեռ չէ կատարել իր խոստումը՝ հեռացնել Ձէյթունից զօրքը և ներել ազատամբույթեան մասնակցող անձանց։

Կ. Պօլսից հաղորդում են «Daly News» լրագրին, որ Մուշում կալանաւորված են մինչև 200 անուանի հայեր, իբրև մասնակիցներ 1894 թվին տեղի ունեցած մի ընդհանուր սպանութեան գործում։ Հիւսիսայինները երկուք են կրում, որ մի գուցէ Սասունի շրջանում նոր խռնակութիւններ ծագեն։

Բէյութի գործակալութիւնը հաղորդում է Կ. Պօլսից, որ այնտեղ շարունակում են կալանաւորել թէ հայերին և թէ թիւրքերին։

Բէյութի գործակալութիւնը հեռագրում է, որ Բիթլիսի ամերիկական միսիոնար Կնապ հասել է Ալէքսանդրէստա. սակայն թիւրքաց տեղական կառավարիչը չէր համաձայնում յանձնել նրան ամերիկական հիւսիսայիններին, այլ մտադիր է ուղիղ նաև նստացնել և դուրս քշել Թիւրքիայից։ Միացեալ Նահանգների դեսպանը բողոքեց և Կնապին բաց թողին։ Կնապ մտադիր է քնալ Կ. Պօլսի։

Բ. Գուռը դեկտեմբերի դեսպաններին, որ նա նշանակել է լրացուցիչ անդամներ այն յանձնաժողովի մէջ, որ պէտք է վերաքննի պետութիւնների հետ ունեցած առևտրական դաշնագիրները և յայտնեց, որ բանախօսութիւնները կարող են տեղի ունենալ վերջնապէս դեսպաններին և յանձնաժողովի մէջ։ Սակայն դիւլոմատիական շրջաններում սպարդիւն են գտնում այդ բանախօսութիւնները, քանի որ ընթերցանելի վերաբերեալ խընդիրներում դեսպաններին առաջարկութիւնները ոչ մի գրական հետեանք չունենցան։

Կ. Պօլսից, Ռուսաց գործակալութիւնը հեռագրում է, որ Բ. Գուռը հաղորդեց մեծ պետութիւններին ներկայացուցիչներին, որ Ձէյթունի համար մասնատակման գայմագամի նշանակելը միայն ժամանակաւոր բնաւորութիւն ունի։ Եւստով կը նշանակվի ըրիստոնեայ գայմագամ։

ԼՈՐԻ ՍՈԼՍԻԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՐ

Անգլիական «Primrose» քաղաքական-պահպանողական և կիսա-աւատական ընկերութեան տարեկան բանկէտում, լորդ Սուրբիւրի այս օրերս նորից մի քաղաքական ճառ արտասանեց զլուստր քաղաքական հարցերի մասին, որոնց մէջ, ի հարկէ, նա չը մոռացաւ չօչափել և հայոց հարցը։ Սակայն այս անգամ պահպանողական կուսակցութեան պետը մի նոր, անսպասելի բացատրութիւն տուեց հայերի քաջածիճաւորութիւնների պատճառին և աշխատեց ամբողջ պատասխանատուութիւնը դրել լորդ Բոլքեթի վրա։

«Ես կարծում եմ, առաջ Սուրբիւրին, որ Հայաստանում կատարված սպանութիւնների պատասխանատուութիւնը չը պէտք է դրել անհնապէս սուլթանի վրա, Այդ սպանութիւնները հետեանք են ցեղերի և դաւանութիւնների մրցման և սովորաբար տեղի են ունենում թույլ կառավարութեան օրով։ Այդ տեսակ կառավարութեան վրա կարելի է երկու եղանակով ազդել, առաջին եղանակը այն է, որ այդ կառավարութեանը առաջարկվեն պահանջներ եւրոպական մի այնպիսի համաձայնութեան կողմից, որ իշխանութիւնը նա միշտ ճանաչել է, երկրորդը—յորդաններն են։ Միակ զէնքը, որ թողել էր այժմեան կառավարութեանը նախկին միսիոնարութիւնը, որի քաղաքականութիւնը նա ստիպված էր շարունակել, յորդաններն էին և կառավարութիւնը գործ դրեց այդ պատճառական միջոցը, որքան ժամանակ որ կարելի էր, բայց այդ տեսակ վարմունքի միակ հետեանքն այն կգաւ, որ զրգուց նրանց վայրենի կրքերը, որոնք սաստիկ վախճում էին իրանց ցեղի և դա-

ւանութեան դերակալութեան համար։ Այդպիսով, անգլիական կառավարութիւնը իր վարմունքով ակամայ կերպով առաջ բերեց շատ սարսափելի դէպքեր։ Այդպէս է Բոլքեթի կարեւոր ժառանգութիւնը։»

Այս առաջին անգամն է, որ լորդ Սուրբիւրին վերջապէս խոստովանում է, թէ Փոքր-Ասիայի հայերի կրած աղէտների վերաբերմամբ մեղաւոր է և անգլիական կառավարութիւնը, բայց յարգելի լորդը երեւի մոռացել է իր անցեալ տարվայ ճառը։

«Հայոց հարցի մասին արտասանած իր անցեալ տարվայ ճառերում, ստում է «Новости» լրագիրը, մարկիզ Սուրբիւրին մեղադրում էր սուլթանին։ Այժմ, ընդհակառակը, նա աշխատում է ամեն կերպ ազատել նրան որ և է պատասխանատուութիւնից հայկական սարսափների առիթով։ Այժմ հայկական խառնակութիւնների մէջ մեղաւոր են դուրս գալիս «ցեղերի մրցումը» և «թիւրք կառավարութեան թուլութիւնը»։

«Հայոց հարցում անգլիական կառավարութեան կրած անաջողութիւնը մարկիզ Սուրբիւրին բացատրում է նրանով, որ նրա նախորդ լորդ Բոլքեթին գործել է «Թիւրքիայի դէմ սպառնալիցներով։ Այդ պատճառով այժմեան պահպանողական կառավարութիւնն էլ ստիպված էր հետեւել նրա օրինակին։ Բայց սպառնալիցները հակառակ հետեանքներ առաջ բերին։ Պէտք է է ենթադրել, որ լորդ Բոլքեթին անպատասխան չի թողնի այդ խօսքերը։»

ՊԱՐԱԳՈՒՄԻ ՀԱՐՅՈՐ

Նախ-Լեդին Դաւիդ օրգերգական մասկան լուրը ճշող տպագրութիւն գործեց ամբողջ Եւրոպայի վրա, բայց բոլորն էլ համոզված էին, թէ ներքին խռովութիւններ չեն ծագի Պարսկաստանում և միջազգային բարդութիւններ չեն ստեղծվի Դաւիդ մասկան պատճառով։ Բացառութիւն կաղում է միայն Անգլիան, ուր մի քանի առաջնակարգ լրագիրներ շտապեցին յայտնել, թէ բազմաթիւ աֆրիկական, ամերիկական և ասիական հարցերին աւելացաւ և մի հարց, այն է պարսկական հարցը։ Չը նայելով անգլիական միսիոնարութեան մէջ ստացված տեղեկութեանը, թէ «Դաւիդում ամեն բան հանգիստ է, «Times» լրագիրը ոչ միայն նախազուշայում է ներքին սարսափելի պետերազմ հանգուցեալ Դաւիդ երկու որդիների մէջ, բայց մինչև անգամ հաւատացնում է, որ Պարսկաստանի մայրաքաղաքում արդէն խառնակութիւններ սկսվեցին և որ Դաւիդ երրորդ որդին արդէն չէ դուրս գալիս պալատից։ «Morning Post» լրագիրը նոյնպէս կարծիք է յայտնում, որ Նախ-Լեդին սպանութիւնը կարող է մեծ փոփոխութիւններ առաջացնել եւրոպական պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ։

«Դաւիդ—ստում է տորիների օրգանը—ծեր էր, և այդ պատճառով Ռուսաստանը կարող էր սպասողական քաղաքականութեան հետեւել։ Իսկ այժմ նա ինչպէս կը վարվի։ Չի դաժ նա արեւոյդ այն համոզմանը, թէ պէտք է օգուտ քաղել հանգամանքներից և ենթարկել Պարսկաստանը իրան։ Ինչ որ վերաբերում է մեզ, մենք ոչ մի կերպ չենք թույլ տայ, որ Հնդկաստանի հետ մեր հաղորդակցութիւններին որ և է վտանգ սպառնայ, և այդ պատճառով էլ մենք չենք թույլ տայ որ և է ազդին ճանապարհ հարկել զէպի արեւելեան ծովերը։ Պարսկական ծոցի վրայով։»

Տորիների մի ուրիշ օրգան «Standard» լրագիրը կասկածում է, որ նոր Դաւիդ ժառանգած լինի իր հօրից այն հեղինակութիւնը և իշխանութիւնը, որ ունէր հանգուցեալ Նախ-Լեդինը։ Այս լրագիրը այսպիսի հարց է առաջարկում, թէ արեւոյդ Ռուսաստանը չի մտածի, որ հասել է ժամանակը յիշեցնելու Մուշաֆէր-Լեդինին հանգուցեալ Դաւիդ իրան տուած խոստումները։ Թէ ինչ են այդ խոստումները, «Standard» սակայն, չէ ասում։ Ապա խորհուրդ է արվում նոր Դաւիդը զիջող լինել Ռուսաստանի վերաբերմամբ աննշան հարցերում, բայց ոչ մի կերպ չը թույլ տայ իր երկրի որ և է մասի կորուստը։ Մի և նոյն ժամանակ, «Standard» յոյս է յայտնում, որ ներկայ րօպէում Ռուսաստանը այնպէս զբաղված է Արեւելեան Ասիայում, որ հաղիւ թէ կարող կը լինի Պարսկաստանում կրկին առա-

ջացնել, որ պատճառ դառնար միջազգային լուրջ բարդութիւնների։

(«Hob. Br.»)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Կօլիս, 18-ին ապրիլի
«Կայսերական գիթութիւնը» հիմակ ալ սկսեց է իր «հոգածութեան» առարկայ ընել քաղաքային պաշտօնեաներու ամսականներուն «կանոնադր» վճարումը։ Անցած օր թիւրք թերթերը պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակեցին, որուն մէջ կիմացներն Սուլթանին նախագահութեամբ յանձնաժողովի մը և անտուկի մը հաստատումը։ Ասոնք մեզ չեն դարմացներ, ամբողջ Տաճկաստան արդէն յանձնաժողով կտրած է, իսկ անգլիկները այնքան շատեցած են որ անհնարին է ամենքին ալ դրամ օգտեցնել։ Վերջապէս քանի որ զփութարութիւն չը կայ մէջը պարսկ սնդուկներ հաստատելու, թիւրք կառավարութիւնը չի վարանիր հատ մըն ալ աւելցնել, խաբելու համար պաշտօնեաները և անոնց սին յոյս ներշնչելու։ Ամէն պարագայի մէջ այս կառակերգութիւնը չը կրցաւ արգելել Տուրա-Պաշէի և անոր կից սուլթաններու ապրանքին 400 խոհարարները և իրենց օգնականները, որ անցած ուրբաթ օր գործադուլ չընեն 6 ամիսի ի վեր ամսական չը ստանանուն համար։ Խոհարարները միաձայնութեամբ կերակուր չեկեցին այդ օրը։ Պէշիկթաշի պահակաւորներն հրամանատար Հասան փաշա քանի մը ոստիկան կը դրկէ, որպէս զի գործադուլ ընող խոհարարներուն խոստի պատուիրին շարունակել գործերին։ Սակայն խոհարարները մտիկ չեն ընել Հասան փաշայի հրամաններուն և զրկուած ոստիկանները լաւ մը ծեծելէն ետք դուրս կը վռնեն։ Ինչո՞րք անմիջապէս կը ներկայացուի Սուլթանին, որ միջազգային փակելու համար կը ստիպուի հրամայել անձնական գանձի մագուկին՝ երկերկու ամսական վճարել խոհարարներուն։ Այս վճարման վրա խոհարարները իրենց գործին գլուխը կանցնեն ու այսպէս կը վերջանայ կերպով եկած ինկած էր Մահմադմէդի Դրախտին մէջ ու տատաղեցուցած փափկասուն սուլթանները։ Տարակոյս չը կայ թէ այս գործադուլին պարագլուխներուն ձերբակալութիւնը մէկ երկու օրէն պիտի սկսի։

Թիւրքերու ձերբակալութիւնները կը շարունակին Պօլսոյ մէջ։ Նոր դէպք մը առիթ տուաւ նորագոյն ձերբակալութեանց։ Կայսերական Գաղաքային Միւլէի վարձարանին թիւրք յեղափոխական ուսանողները սկսած էին անոնանցի գանձել այն լրեսները, զոր ոստիկանութիւնը դրած է անոնց վրա իրենց դասընկերներէն։ Զեղափոխական ուսանողներուն զայրոյթը այնքան կաւեւնայ, որ անցած օր կը յարձակին լրեսներուն վրա, երկու կողմէն ալ զինք Լաւ մը կը ծեծեն ու կը վիրաւորեն։ Կառավարութիւնը կը միջամտէ ու կը ձերբակալէ զանոնք։

Պ—ի

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԳՈՒՄԻՑ

Բաշա, ապրիլի 21-ին
Նամակ գրում եմ թիւրք տպագրութեան տակ։ Կիրակի առաւօտեան հեռագիրը զուգեց մի թիւրք լուր։ Պարսկաստանի վեհապետ Նախ-Լեդին Դաւիդ սպանված է։ Անգլիկները կարծեցին նրա կեանքը մի այնպիսի ժամանակ, երբ ամբողջ Պարսկաստանի ժողովուրդը թէ հայ և թէ պարսիկ, պատրաստվում էր մեծաշուք հանդիսով տօնելու իր վեհապետի թագաւորութեան յիշատակը։ Պատգամաւորներ էին ուղարկվում զանազան ազգութիւնների և կառավարութիւնների կողմից, կամարներ, պակներ, ընծաներ էին պատրաստվում ի յիշատակ այդ հանդիսաւոր տօնի, ծրագրերն էին մշակվում, և այս բոլոր շուքը կատարվելու էր ապրիլի 24-ին, բայց յանկարծ այդ բոլոր ուրախութեան պատրաստութիւնները սուղի փոխվեցան։

Կրօնաւոր զգալի է մահաւանդ հայերի համար։ Ո՞վ չէ յիշում այն օրը, երբ հայկական սարսափելի կոտորածների ժամանակ, պարսից վեհապետի հրամանով, Թիւրքիայի պարսից հիւպատոսարանների շատերի դռները բացվեցան կոտորածից փախտական հայ կանանց և մանուկների առաջ, և պաշտպանութիւն ու խնամք գրտան։ Դաւիդ չէ անցել այն օրից, երբ թիւրք կառավարութեան զաղամի ազնեանքների շնորհիւ, մոլեռանգութեամբ վառված ամբոխը Սալմաստի

և ամբողջ Արարատականի հայ գիւղերին կոտորածի վտանգ էր սպառնում, մի և նոյն վեհապետն էր, որ իր մի հեռագրով հայի մի մաղը 200 թուման տուգանքի և 200 ճիւղտ հարուածի գնահատեց, որով և զսպեց մոլեռանդ ամբոխի կատաղութիւնը։ Եւ վերջապէս շատ չէ անցել այն օրից, երբ միապետը, Թէհրանի թիւրքաց դեսպանի այն չարախօսութեանը թէ՛ հայերը մտադիր են խռովութիւն բարձրացնել և յարձակում գործել դեսպանատան վրա, պատասխանեց թէ՛ հայերը այդ բանը չեն անի» և սրանով կործանեց չարանեղութիւնը։

Որ մէկը թեւեմ այն անչափ բարութիւններից և խնամքից, որ նա տածում էր առհասարակ զէպի ըրիստոնեայ հպատակները և մահաւանդ զէպի հայը իր յիմնամեայ թագաւորութեան ընթացքում։ Նա նպատակ էր կուտուրայի, սիրում էր ուսում և ուզում էր, որ իր հպատակները կրթվեն, չը խնայելով իր նիւթական օժանդակութիւնը կրթական հաստատութիւններին։ Ահա թէ ինչու համար հայը, իբրև կուտուրայի ընդունակ աղբ, երկար ժամանակ վաղելով նրա հայրական խնամքը, խորին ցաւ զգաց իր վեհապետի մահվան րօքը լսելով։ Յուսով ենք, որ նրա յաջորդ Մուշաֆէրէդին Դաւիդ իր հօր արժանաւոր յաջորդը լինի։ Ամսիս 23-ից բոլոր խառնութիւնները սեղծ և սե զրօշակով էին ծածկված, ինչպէս և հայկական կամարը, որ հանդիսաւոր հրաւորութեան համար էր պատրաստված։ Այդ օրը հոգեհանգիստ կատարվեց հայոց եկեղեցում, ուր ներկայ էր հայ գաղթականութիւնը։ Արկիթներում էլ մաղմանք կատարվեց, որին ներկայ էին նահանգապետը և պարսիկ պաշտօնական անձինք։

Պարսկաստանի բոլոր ընակիչները այժմ սարսափի մէջ են, շատերը ամբողջ զիշերներով չեն քնում։ Բոլոր առ րօպէ խռովութիւնների և առաջակային յարձակումների սպասելով։ Վաճառականութիւնը կանգ է առել, ճանապարհների երթևեկութիւնը սակաւացել, ազատութեան յոյսը կորել, թէ և ոչ մի զգալի դէպք մինչև այժմ չէ պատահել։ Տեսնենք երբ կը վերանայ այս սարսափը և նախկին ապահովութիւնը երբ կը վերահաստատվի։

Դաւիդ սպանման մահաւանդութիւնները պաւտում են, ոմանք այդ սպանման պատճառը վերաբրում են սե փողի շատանալուն, ուրիշները կրօնական աղանդներին, ոմանք՝ ներկայումս տիրող սարսափելի թմաւորութեան և ոմանք՝ մահմէդական կրօնաւորների հաւածանքին և այլն և այլն...

Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Kölnische Zeitung» հաղորդում է, որ Կ. Պօլսի յունաց պատրիարքը յայտնել է սերբիական միտրոպոլիտ Միլայեթին, ինչպէս և բոլոր ուղղափառ պատրիարքներին ու միտրոպոլիտներին այն պայմանները, որոնց հիման վրա ինքն պատրիարքը համաձայն է վերցնել բողոքական եկեղեցուց բանադրանքը և ճանաչել նրան։ Այդ պայմանները հետեւեալներն են.—բողոքական էկզարխի իրաւասութիւնը տարածվում է միայն Բոլգարիայի և Արեւելեան Բուլղարիայի վրա, իսկ Մակեդոնիան ամբողջովին անցնում է պատրիարքի իշխանութեան ներքոյ, միայն պատրիարքը պարտաւորվում է ի նկատի առնել երկրի ազգայնական յատկութիւնները։

«Գերմանիայում մեռաւ յայտնի պատմադէտ Տրեյչկէ, որը յայտնի էր իբրև սաստիկ երկրպագու գերմանական տարրի պատմական մեծ կուսման և որի հայրենասիրութիւնը հասնում էր չօվինիդմի։ Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ նա պրոֆէսորական ամբիօնից խոստում էր գերմանական ազգայնական ձգտումների և ներքին իրաւունքների մասին։ Նրա իսկ իր զուտ պատմական հետազոտութիւնների մէջ նա չէր կաւորանում աղաւա մնալ իր տեղեկեցիականից։ 1874 թվից նա Բերլինում է, ուր ստացաւ Բանկէի մահից յետոյ պրուսական պետական պատմադրի տիաղոսը։ Նրա գիտական գործունեութիւնը սկսվում է 1858 թվին նա ստացել էր պրիվատ-դոցենտի պաշտօն։ Զետոյ տեղափոխվեց Ֆրէյլինգ, Բերլին, Կիւլ, Հեյդելբերգ, նորից Բերլին և այդտեղ վերջնականապէս հաստատվեց մինչև իր մահը։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՈՒՄ, 26 ապրիլի: Կարգինալ Գալիմբերտի վարձանդեց:

ԲՈՒՌԱՐԵՍ, 26 ապրիլի: Պատգամաւորները ժողովում Գրադոստանո հարցադնդում արեց կառավարութեանը Ռուսիայի մասնակցութեան մասին Ռուսաւորայի հարցադնդի տնայաւարութեանը: Մինիստր-նախագահը պատասխանեց, որ կառավարութիւնը ղեկավարվում էր միայն Ռուսիայի գրաւած գրութեամբ: Եւրոպայում և բարեկամական այն կապերով, որ ղոյովիւն ունեն երկու պետութիւնների մէջ: Եւ վերաբերում է ուսանողական ցոյցին, կառավարութիւնը կատարեալ ապաստան տուեց ուսանող երիտասարդութեան այդ ընթացքին: Բայց զրգուղ ընտանրութիւն կողմ մակագրութիւններով զրոյանների երկուց նա դատաւարտում է: Կառավարութիւնը յոյս ունի, որ ուսանողները օրինաւոր կը պահեն իրանց և չեն մոռանայ, որ բարե թաղաքացու առաջին պարտաւորութիւնն է յարգել իր հայրենիքի գրութիւնը:

ԲԵԼԳԻՆ, 26 ապրիլի: Ապրիլի 25-ին Սօֆիայից այստեղ եկան իշխանին զինաւորելու համար երկու արտակարգ զնացքներ Սօֆիայի 800 թաղաքացիներով: Պատգամաւորութեան զըլուին են կանգնած Սօֆիայի թաղաքացի Օգնական Գուրաւոր և 10 փողովորական ներկայացուցիչներ: Չը նայելով տաւառեան 6 ժամին, կայարանում պատգամաւորութեանը զինաւորեց սերբիացիների անգղեր բաղձութիւն օրկէստով և ուսանողական խորով, որոնք կատարեցին բոլգարական, սերբիական և ուսուց օրհներգը: Գուրաւորը ճառ արտասանեց թաղական և պալմական պետութիւնների բարեգաւաճման մասին Ռուսաստանի հովանաւորութեան տակ: «Ժիվիտ» կայսրին, թագաւորին և իշխանին չէր դադարում: Բոլգարական պատգամաւորութեան ցանկութեամբ միտրոպոլիտ Միխայիլը մայր տաճարում մաղմանը կատարեց կայսրի, թագաւորի և բոլգարական ու չէրնոգորիական իշխանների երկարակցութեան համար: Փողոցները չընդ կերպով զարդարված են սերբիական և բոլգարական դրոշմներով, նոյնպէս և երկու պետութիւնների զինանշաններով: Իշխանը կը ժամանի երեկոյան 6 ժամին: Իշխանի գալուստը, նոյնպէս և այն փաստը, որ բաղմաթիւ բոլգարներ եղբայրանում են սերբիացիների հետ, ամենայաւ ապացոյց է երկու ժողովուրդների սրտակից բարեկամութեան, երկու կողմից ևս անհետացաւ կուսակցութիւնների թշնամութիւնը:

Իշխան Ֆերդինանդը ժամանեց երեկոյան 7 1/2 ժամին: Նրան զինաւորեցին թագաւորը, թիւրքաց միտրալի անդամները, բոլգարական զինաւորական զործակալը, սերբիական միտրոպոլիտը և իշխանութիւնները: Կայարանում կանգնած էր պատաւաւոր պահակախումբը: Զրոյանով և երաժշտութեամբ կայարանի մօտ կանգնած էին նորակ 800 բոլգարները: Երբ թագաւորը ժամանում էր կայարանին, բոլգարները զինաւորեցին նրան ցոյցներով: Թագաւորութեանը աւետեց իշխանական գնացքի գալը: Թագաւորների հանդիպումը շատ սրտակից էր: Թագաւորը իշխանի հետ միասին դուրս եկան կայարանը: Լսվեց բարձրաձայն շուրջ: Թագաւորները միասին գնացին Նոր պալատը, ուր իշխանի և նրա սովետայի համար ընկալարաններ են պատրաստված: Գլխաւոր փողոցները լուսավորված են էլէկտրականութեամբ: Իշխանը Սօֆիա է գնում վաղը:

Կ. ՊՈԼԻՍ, 26 ապրիլի: Ապրիլի 25-ին սուրժանը ընդունեց ուսուց ղեկավարին: Վաղը նա ճանապարհ է ընկնում Օդեսա: Գնում են Օդեսա և թագաւորական հանդէսներին Մոսկվա՝ թիւրքաց պատգամաւորութիւնը բաղկացած Զիւս-փաշայից, Կոստակի էֆէնդիից, Կարաթէօօրի էֆէնդիից, զենեքալ Զաիդ-փաշայից, պալատական քարտուղար Զաիդ-բէյից և երկու աղիւստաններից, նոյնպէս և մի պատգամաւորութիւն արեւելեական պատրիարքի կողմից, բաղկացած երկու միտրոպոլիտներից և վեց հոգեւորական և աշխարհական անձնակցներից, և Եւրոպայի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքների կողմից:

ԼՈՆԴՈՆ, 29 ապրիլի: «Times» լրագիրը այն միտքն է յայտնում, թէ որովհետև Ռուսաստանը մեծ գործունէութիւն է ցոյց տալիս հիւսիսային Պարսկաստանում, անհրաժեշտ է, որ Անգլիան էլ որ զերաւելիու դեր է խաղում հարաւային Պարսկաստանում, զօրեղացին այնտեղ իր զորութիւնը: Այդ պատճառով, լրագիրը անհրաժեշտ է, որ մուտքը ղէպի Բէլուջիստան բաց լինի թէ ուղղադիտական և թէ աւետարական կողմերից:

Կ. ՊՈԼԻՍ, 27 ապրիլի: Խոյէրան Եղիպտոսում սատակաւում է: Ալեքսանդրիայից եկող ապրանքները 5 օրվայ կարանտին են ենթարկված:

ՄՍՍՍՎԱ, 28 ապրիլի: Ապրիլի 27-ին Թիֆլիսից հասաւ այստեղ կառավարչական գնահատաւորիւստեղ Շէրիմեան: Սկսեցին զօրքեր գալ Պետերբուրգից: Նրա Մեծութիւնները կայցելեն թաղաքային ղոււման մայիսի 23-ին:

ՕԻԵՍՍ, 28 ապրիլի: Ապրիլի 26-ին հասաւ արեւելեական պատրիարքի արտակարգ ղեկավարութիւնը: Գնապատկան հետ եկած մեր

ղեկավար Նելիզով ճանապարհ ընկաւ Պետերբուրգ: ՀՈՒՄ, 28 ապրիլի: Պատգամաւորների ժողովը վիճարանութիւններ արեւելեական թաղաքականութեան մասին: Պատգամաւորութեանը քաղաքականութիւնը, զուրա Սերմանտա հերքում է Մասովայից հեռանալու որ և է միտք:

ՄՍՍՍՎԱ, 28 ապրիլի: Գնեւրալ Բալդիսէրա հրաւիրեց Մանգալա, Սեբաստ և Աքոստաֆարի բաւերին: աղաւել նրանց մօտ գտնվող իտալական պատերազմական գերիներին: Հակառակ ղէպքում Բալդիսէրա կը ղերի խիստ միջոցներ: Սեբաստ և Մանգալա խուսափող պատասխաններ տուեցին: Աքոստաֆարի, ազատ թողնելով իր մօտ գտնված գերիներին, խոստացաւ վաղը վերադարձնել մնացած իտալացիներին: Բանակցութիւններ Մանգալայի և Սեբաստի հետ չարունակվում են: Բալդիսէրա հրամայեց խիստ միջոցներ գործադրել:

ԼՈՆԴՈՆ, 28 ապրիլի: «Times»-ին Թէյնանից հաղորդում են, որ Շիրազում տեղի ունեցան նոր խառնակութիւններ: Երեքշաբթի պատճեցին մի քանի անձանց: Չորեքշաբթի զգացվում էր կենսական միջոցների պակասութիւն: Բաղարները փակված են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍԱ	
Ապրիլի 26-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէն	94 ր. 25 Կ.
Բեռլինի վրա 100 մարկ	45 > 95 >
Պարիզի վրա 100 ֆրանկ	37 > 35 >
Ռուսի	արծէն
Մաքսային կուպոններ	149 > >
Բօրսային դիվիդենդ	5 > 70/0 >
49/0 պետական բէնտա	98 3/8 >
Ներքին 5/0 առաջին փոխառութ.	283 > >
— երկրորդ	251 > >
5/0 գրաւ. թղթ. աղյ. բանկի 215 1/4 > >	
5/0 պետական երկաթուղ. բէնտա 100 1/2 > >	
49/0 ներքին փոխառութեան	98 3/8 >
4 1/2 0/0 գրաւ. թղթ. աղյ. կալ. բանկի 100 1/8 > >	
Աղյ. կալ. Պետ. բանկի խաղարկութ.	> >
4 1/2 0/0 վկայակ. գիւղ. հող. բանկի 101 > >	
Փոխ. կրեդիտ. ընկեր. մտաւ.	> >
Պետերբուրգի թաղաքային կրեդիտ. ընկերութեան օրկիցադիւններ.	101 > >
Մոսկվայի թաղաք. օրկիցադիւններ.	101 > >
Օդեսայի	98 1/4 >
Թիֆլիսի	> >
Թիֆլիսի կալ. բանկի 6/0	> >
5/0	> >
Քաւթայիսի	6/0
5/0	> >

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՐԵՍԱ ԱՐԹՐՈՒՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնջովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաւոր-ժուլեան, սիֆիլիս և վնասեղական հիւանդութիւններ:

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-թոշի ԳՈՒՆԱՅԷՎԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Յ. ՊՐՕՏԱՍԵՎԻԺ—12—1 ժ. ակնաջի, կուկիայի, քիթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈԼԻՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայի և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և չորաթի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻԺ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈԼԻՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՆԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և օտեական օրդանների հ. ներքին և մարմի հ.

Ա. Գ. ԳՈՒՆԿՈ քիմիական և խոչարացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, աւրեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերաբաւում է՝

ԲՈՒՄԱՍԱՐԳԵԱՆ

ԲԱՅՅԻԻ

- 1) ՈՎ ԵՐ ՄԵՂԱՆՈՐ, զինք 20 կօպ.
- 2) ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱՋԷ (սակաւաթիւ 20 >
- Գլխով: Թիֆլիս, Զաք. Գրեգորեանցի Կողմաւան գրաւաճառանոցը և հեղինակի այրիւն:

(№ 46) 3—3

ՅՈՏՕԳՐԱՖԻԱ Տ. Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ
Պատեւ ունեւ յայտնել, որ նոր բացել եմ ՅՈՏՕԳՐԱՖԻԱ, ուր ապրիլի 30-ից ընդունում եմ ամեն տեսակ լուսանկարչական պատուէրներ ամենաշափաւոր դներով: Գործը կատարվում է չընդ և բարեխղճութեամբ. նկարները վերցնվում են ամենանոր կատարելագործված գործիքներով:
Յոտօգրաֆիան գտնվում է Միքայելեան փողոցի վրա, տ. № 95, Պուշկինայա (№ 48) 1—2

ՄԻՆՕԴԵՆ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՇՆԻ Նշանակեալ է աճուրդ ի 26 և 29 այսր ապրիլի վասն տալոյ ի վարձու գլխիւն ԲՅՆԻ Հանդերձ Աղալայի Հողովքն և Բեթալարու անուանեալ արօտատեղեան իննամեայ ժամանակաւ. ցանկացողը կարեն ի ժամադրեալ աւուրս ներկայ լինել յԱռենի Սինօզի Հանդերձ գրաւականօր:
(№ 44) 5—5 Անգամ Կոնսիտօրիայի Համազասպ վարդապետ

ՊԱՆՍԻՕՆ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ
(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԻ ԿԱՐԻՒ ՄԱՍՆԱԻՈՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻՍԻՄ)
Ընդունում է երթեւեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ, պատրաստում է գի մնա գի աների, կադետներ և կորպուսի, զեմլէմէրնի, Բէաւկան ուսուցիչներին համար:
Ուսումնական տարվայ վարձն է փոքր պատրաստականի համար 60 ռուբլի. միջև երկրորդ դասատուն 100 ռ. երկրորդից վեր՝ 150 ռուբլի:
Այս տարի գիննադիւս և բէաւկան ուսումնարան մտնելու համար ըննութիւն տուող 12 աշակերտներից 11 հողի յաջողութեամբ ըննութիւն են տուել և ընդունվել որ կադետ է 92%:
ՈՒՍՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԱՄԲՈՂՁ ԱՄԱՈ
Հասցէն. ТИФЛИСЬ. Солоаки. Гановская ул., № 11. собст. домъ.
(№ 47) 3—10

ՀԱՅ ԳՈՐԾԻԶՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ
Լուսանկար ՏԵՐ-ՎԱՆԴԵԱՆԻ մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝
Հոգեւորականներ. — հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ Մ. ԳԵՈՐԳԻ Վ, ՄԱԿԱՐ և ՄԻԿԻՏԻ Կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱՔՏԵԱՆԻ (Կաթողիկոս Կիւիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐԿ ԷՋՄԻՐԵԱՆԻ, ԱՐԻՍԱԿԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՍ ՍԵՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐԿԷՑԻ և ուրիշ արժանաւոր հոգեւորականների:
Նոյն տեղը վաճառվում են. — ԳՐԻԳՐ ԱՐԹՐՈՒՆԻ, ԲԱՅՅԻԻ, ՌԱՅԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱՋԱՐԵԱՆԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԳԱՄԵԱՆԻ (բոլոր գերբերում նկարված), ԽՐԱԳՐԻՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ, Նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՄԱՐԻ, ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻԿ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԹՐՈՒՆԻ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօդեւանական ալբոմը, նմանապէս և ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:
Վերադիւնեալ պատկերները արժեն մեծադիր 3 ռուբլի, ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱԲԻՆԵՍՏԻՆԻ կոլված պատկերները՝ 40 կօպէկ, ՎԻՋԻՏ կոլված պատկերները՝ 20 կօպէկ:
Հասցէն. ТИФЛИСЬ Фотография Теръ-Гевонджанца (На Михайловск. мосту). Հանապարհաձայնը գնողի վրա է:
(№ 117) 9—10

ԲԵՐԴԱՐԻԱ
ԲԵՐԴԱՐԻԱ-ԿՈՍՄԵՏԻԿԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՈՐԻԱ ՐԻՍ-ԳՈՒՑ-ՄԱՆ
СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА ПРИВЛЕЧЕНІЯ ПОМАДЫ ПАСТЫ ПАМАДЫ
EUGENIE BERDAR
ԷՕԺԷՆԻԱՅԻ ՊԱՍՍԱ
Elixir Mélange
Մազերը աճեցնելու և գլխի թեփը ունայնեցնելու հերոսի: Գինը 2 ռ.
ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ
սովորած, վարդազոյն և Բաշէլ (թուլի ղէմը ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մարթու վրա և բոլորովին անկասկածի է աչքի համար, մարթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն: Գինը 1 ռ. 20 Կ. 1 ռ. 50 Կ.
ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՆ ՆԵՐԿ
հեղուկ վիճակի մէջ այտերին և ակնաջներին տալիս է բոլորովին քնակաւ, վարդային գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում: Գինը 1 ռ. 50 Կ.
ՄԻՐՏԱՅԻՆ ԲԱԼՁԱՄ
(պուզրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքշող կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն: Նա ունայնեցնում է արեւաքը, մաշեցը և մարթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն: Գինը 1 ռ. 75 Կ.
ՔԻՆԱՎ-ՎԻՅԷԻՆԱՅԻՆ
գլխի պօմաղ Պէրուանական բաղամով եփած՝ մազերը սննդեցնելու, խոտացնելու և աճեցնելու համար: Գինը 2 ռ.
ԽՈՒՆԱՅԻՆ ՊԱՍՍԱ
հրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ձկունութիւն: Գինը 1 ռ. 30 Կ.
ՈՒՂԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ
բեղերի համար (Բիւ-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման: Գինը 75 Կ.
ՆԵՐԿԵՐ ՄԱՋԵՐԻ ՀԱՍՄԱՐ
(Բիւ-Գուտման), սև, չազանակաւոր և խարսեալ: Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում: Գինը 3 ռ.
Երախտում է բոլոր գեղարարական և կոսմետիկական խանութներում: Գլխաւոր պահակ և աւել Բարձրագոյն հաստատված՝ Գեղարարական ապրանքների կողմանան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բաղդադ:
(№ 26) 7—50